

ՔԱՆՈՒՆՈՐ ԱԳՐՈՒԹԻՒՆ
 Պուրջարիոյ համար 10
 Տարեկան 5
 Արտատպանի համար 12
 Վեցամսեայ 6
 ԿԱՆԻՍԻՎ ՎՃՆՏԻՒՆ
 —(—
 Գրութիւնք ևս չեն տրուիր
 —(—
 Իրանացի սոցի 20 սակ-
 րիւն և Երեւանի ակադեմի-
 քայնեան համար 20 ՕԼՈ
 գնդ իրարայ :

ՇԱՐՇՈՒՄ

Կամակ եւ դրամ դրկեյ
 Խոստումներու հասցեիս
 —
 я на ввстникъ
 «Шаржумъ»
 Варна.
 Redaction du journal
 «Charjourn»
 Varna (Bulgarie)

R. P. Kalémkarian
 (Autri-he)
 Melchiorstangasse IV. 4
 Vienne

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԻՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ Գ. ՎԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԵՆԱՏՈՒ Յ՝ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՄԵՐ ՊԱՆՈՒԹՅՆԵՐԸ

—(—
 Չարդերէն առաջ կը պան-
 դիստէինք, շարդերէն հոգը ա՛լ
 աւելի պանդիստեցինք :
 Ո՛ր պիտի յանգի հայրենիքի
 կենսական ուժերուն այս մշտա-
 կան պարպումը, այս անդադրում
 հոնումը դէպի դուրս, դէպի օ-
 տարութիւն :
 Պանդիստելու նպատակը եթէ
 դրամ դիզելն է, տարիներու այս
 երկար ընթացքը բաւական չե-
 ղա՛ւ փորձով ցուցնելու թէ ան-
 իրականալի երազ մըն է ատկաւ :
 Ձէ՞ մի որ ամէն տեղ՝ հայ պան-
 դուստր տանեակ տարիներ զը-
 րաստի տաժանի կեանք մը վա-
 րելէ ետքը, դարձեալ նոյն թըշ-
 ուտը կը մնայ, տա տարբերու-
 թեամբ որ հիմա ալեւոր անկարի
 մը վերածուած է երբեմնի հուժ-
 կու, լեռան պէս հայաստանցին՝
 խամրած՝ հեռու ընտանիքի և
 զաւակներու փայփայանքէն, զու-
 ցէ այս աշխարհի միակ մխիթա-
 րանքէն :
 Իսկ եթէ պանդիստութեան նը-
 պատակը ազատ երկրի մէջ բազ-
 դատաբար աւելի անդորր և գէթ
 ապահով կեանք մը վարելն է,
 այն ատեն խնդիրը կը փոխուի և
 տեսակ մը դատապարտելի անձ-
 նասիրութեան երեւոյթը կառնէ :
 Եթէ քրդին և թուրքին հա-
 լածանքները անտանելի կը դար-
 ձեն կեանքը Հայաստանի մէջ,
 ուրեմն այդ հաշուով հայրենի-
 քի ամբողջ հայ տարրին առնել
 քալել կը մնայ : Բայց մե՛ք կը
 տեսնենք թէ իրողութիւնը տար-
 բեր է : Հայեր կան որոնք հակա-
 ռակ ամէն բանի, անշարժ կը
 մնան պայծառական հողին վրայ,
 միշտ, կենդանի իրենց խրոխտ
 լեռներուն պէս Երիտասարդներ,
 ծերեր, կիս, երախայ և հարս-
 ներ կան այնտեղ : Վատութիւն
 չէ՞ իրենց սեւ բախ՝ ին յանձնել
 մեր արեան ու ոսկորներուն մասը
 կազմող այդ սիրելիները, և, օ-
 տար ավերու վրայ, աննպատակ,
 և ամէն արժանապատուութենէ
 մերկացած կեանք մը յաշքել :
 Այո, քու քաղաքիդ ու գիւ-

ղիդ մէջ թշուառութիւն և հա-
 լածանք (այ) : Բայց միթէ սրտոտ
 հայու և պարտաճանաչ հօր կամ
 արեւակցի մը համար՝ այդ տխուր
 իրողութիւնները՝ ընկրելու, հե-
 ռու փախչելու պատճառ մը կըը-
 նա՞ն ըլլալ :
 Այսօր, պանդուխտ հայաս-
 տանցին հարցաքննելով պիտի
 սոս ումով համոզուիք, որ տա-
 րաբախտը լուր մը իսկ չունի իր
 սրտին ամենէն մօտիկ սիրելիներ-
 րէն : Ձի գիտեր թէ իր աղջիկը
 իր տո՛ւնն է՝ թէ արդէն ո և է ա-
 ւաղակապետ պաշտօնատարի հա-
 րէմին տարուկ խաղալիքը դար-
 ձած է : Ձի գիտեր թէ իր զա-
 ւակը՝ նորարայս պատանի՝ ո՞ղջ է՝
 թէ թրքին սուրէն խողխողած :
 Իր օճախը, իր եկեղեցին կան-
 զու՛ն են, թէ հողին հետ հարթ
 հաւասար :
 Եւ կը մորմոքի հէզ պանդուխ-
 տը : Գիշերուան լուսթեան մէջ,
 իր ցած ու խոնաւ սենեկին մէջ,
 թշուառութեան խշտեակի վրայ՝
 կը հառաչէ՝ արցունքի խոշոր կա-
 թիւնն իր թափէ : Բայց տեղէն
 չի շարժիր : Հետեւեալ օրը դարձ-
 եալ հոն է : և կամ՝ աւելի հեռու
 տեղ մը : Ձի մտածեր որ եթէ սո-
 վորական ժամանակներու մէջ իսկ
 հայրենիքէ հեռանալը յանցանք
 մըն է, այսպիսի պարագայնե-
 րուն մէջ մանաւանդ՝ չլիքադառ-
 նալը պարզապէս դաւաճանել է
 հայու, հօր և արեւակցի սմե-
 նէն տարրական պարտականու-
 թեանց դէմ :
 Կրէտացին ալ նուազ ենթար-
 կուած չէր թրքական հալածան-
 քին, բայց բնաւ չի գողթեց :
 Իր երկրին մէջ մնաց ու կուռե-
 ցաւ : Հայրենի հողէն հեռանալը՝
 անկէց հրաժարուելու, ապապայի
 ամէն տեսակ ծրագրերէ ձեռք
 քաշելու պէս բան մըն է : Ի՛նչ
 ազգակիրճան ձգտում : Թուրքը
 մեր երկրին տիրած չէ, այլ մի-
 այն յովիշտակած է զայն : անոր՝
 մեր պայտերուն հողին վրայ մնա-
 լը առժամայ կը նկատենք միշտ :
 դա՞տ ունինք թրքին դէմ հինգ
 հարիւր տալ ինքի լ վեր : և պի-
 տի շարունակենք զայն՝ ինչալով,
 ելլելով, ջարդուելով, երբեմն ալ

ջարդելով, մինչև որ օրինաւո-
 րապէս կուռելու արուեստը սոր-
 վինք : Ով որ իր հայրենիքէն
 հեռացած է, կիսովին ուրա-
 ցած է հայրենիքի դատը : և
 մնձագոյն յանցանքը անոնցն է
 որ հայոց հին գաթականութիւն-
 ները ստեղծեցին : Չը ստեղծուե-
 լու էին անոնք : Այն ատեն զուցէ
 նուազ քաղաքակիրթ ըլլալինք,
 բայց քորդն ալ մուտք չի պի-
 տի գտնէր մեր ստուար խաւե-
 րուն մէջ, ու այսօր չը պիտի
 ողբայինք այն արհաւիրքները
 որոնցմէ աշխարհ ցնցուեցաւ :
 Հայրենիքէ հեռու մնալով ա-
 մենէն մեծ հաճոյակատարութիւ-
 նը բրած կըլլաք թրքին : Այն-
 քան չախտօժիր հայոց ներկա-
 յութեանէն Հայաստանի մէջ, որ
 կողկասի 40,000 զաղթականնե-
 րուն դարձը՝ արտօնելու կը վա-
 րանի՝ հակառակ ուս կառավա-
 րութեան պնդումներուն : Եւ ար-
 դարեւ, հայէ թովուր Հայաստան
 մը թուրքին վերջնական յազ-
 թանակը չէ՞ : Ո՛ր միջադա-
 յին օրէնքը պիտի թողարտէ,
 լոկ պատմական վիճալութիւննե-
 րու ուժով՝ երկրի մը տիրապե-
 տութիւնը յանձնել փոքրամաս-
 նութեան մը, որուն զաւակները,
 թէեւ ազատութեան ձգտող,
 բայց բաւական տոկուն և անձ-
 նուէր չեն զանուած՝ անբաժան
 մնալու այն հողէն, այն խնկարոյր
 յիշատակարաններէն, որոնք ի-
 րենց՝ և միայն իրենց կը պատ-
 կանին :
 Ե՞տ ամենքդ :
 «Ետ» բառը որ սովորաբար
 այնքան ախուր կը հնչէ, հոս՝
 վեհանձնութեան, պատույ և հայ-
 րենասիրութեան բոլոր շնորհ կը
 կրէ :
 Թողէ՛ք այդ օտար երկիրները,
 որոնք նախատի՛ք, զրկանք և
 տառապանքներ վերապահած են
 ձեզ, և ե՛տ, ձեր հայրենիքը վե-
 րադարձէք, ու խտելով ա՛լ չհե-
 ռանալ անկէց, նոյն իսկ եթէ
 թրքին գարշելի փոփոխուե-
 լը դարձեալ ապառնան ձեր
 կեանքին : Գուք չէք վախճար
 արդէն այդ կատաղի շան փըր-
 վուրներէն, որոնց թոյնը օրէ օր

անդոր կը դառնայ : Ձեր զաւակ-
 ները իրենց հօր կը սպասեն,
 կուռողները՝ իրենց զինակից եղ-
 բայրներուն :
 ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԻՐ

ՕՐԸ ՕՐԻՆ

ԳՆԴԱՊԵՏ ՊԻԿԱՐ

Դժբախտ Դրէյֆուսի աղտոտ
 դատը պատճառ դարձաւ ենթադ-
 րելու, նոյն իսկ հաւատալու որ
 մտքի ու սրտի ազատութեան որ-
 րան, կենդանարար, հին, մար-
 դին ստրուկ դարձնող օրէնքնե-
 րը, կարգերը ու հիմնարկու-
 թիւնները քանդող և յեղափո-
 խութեան փրկարար բոցերով մ-
 բողջ աշխարհը հրդեհող Պրան-
 սիան բարոյապէս ընկել և մի
 նեխված ու վարակիչ դիակ է
 դարձել :
 Հին ու բոլորովին եսական իշ-
 խողներ իր կաթիլէ բուռնցքնե-
 րը, որոնց մէջ ճգմվում և ա-
 րեւնքամ էին լինում միլիոնա-
 ւոր ժողովրդներ, ջախջախող
 բուրժուազին կորցրեց իր իդէ-
 ալները, եռանդը, ինքը անցաւ
 հին իշխողներ ի տեղը և, իր
 զօրութիւնը ամուր պահելու հա-
 մար, ձեռք մեկնեց կղերին ու
 զինուորականութեան՝ իր նախկին
 թշնամուն :
 Վերջին տարիներում սկսեցին
 երեւան գալ բուրժուազիայի բա-
 րոյական անկման նշանները : Բու-
 լանժէ, Պանամա, վերջապէս ա-
 մենաքստմնելին՝ Դրէյֆուսի գոր-
 ծը :
 Ահա այս վերջին գործումն էր՝
 որ աւելի սուր կերպով երեւաց
 Պրանսիոյ բարոյական անկումը :
 Սպայակոյտի դաւաճան պաշտօն-
 եաները, իրանց հայրենիքը աւելի
 դիւրին կերպով վաճառելու հա-
 մար, մեղադրեցին անմեղ, բայց
 հրէա Դրէյֆուսին, հաւատացած
 լինելով որ բարոյապէս ընկած
 բուրժուազին, որի համար դրա-
 մից ստելի թունդ և սուրբ բան
 չը կայ, չէր կարող կասկածել
 հրէաի մեղաւորութեան մէջ : Հը-
 րէա, բայց հաւատարիմ, սպան

պատմից ամենամեծ զինուորական կերպարան էր։ Բայց նրա բարեկամները քնած չէին, ամեն ճիշդ թափում էին անմեղին զոհողներին զբոսնել։ Պաշտպանները հրեաներ էին մեծ մասամբ, իսկ հակառակորդները ամենաբարձր պաշտօնեայ քրիստոնեաներ։

Գործը գծաբար էր հարկաւոր էր տակաւ և հմտութիւն գործելու այնպիսի հակառակորդներին դէմ՝ ինչպիսիք էին կղերքը և զօրքը՝ իրանց ամենաշօթեղ ներկայացուցիչներով։

Բուրժուազիան, կղերքը և զօրքը գոգովեցին, ֆրանսիական կաշառված մամուլի մեծ մասը պարձաւ հրեաների դէմ ամենախառապի յարձակում գործող զէնքը։ Հեռազնեակ ֆրանսիական ընկաւ տեղի աշտոտ հոսանքի մէջ։ զարձաւ կոյր շովինիստ, ուղեց մտանալ արգարտ թիւնը և սօքի տակ տալ այն ամեն սուրբ գաղափարները, որոնց իրագործման համար՝ աւարիներով կուել ու արիւն էր թափել։

Ֆրանսիաի անցեալով հիացող և նրան պաշտող մարդիկ՝ սաստիկ ցաւ զգացին և պատրաստուած էին խաչ դնել ֆրանսիական պատմական մաքրութեան և լղէալիստութեան վրա։

Ահա այդ միջոցին սուպրէզ եկաւ Զօլան՝ փրկելու իր հայրենիքի պատիւը։ Եղազակելով՝ գուք անաղնիւ էք և յանցաւորներ։ Գուք ոչնչացնում և սրբապղծում էք ֆրանսիոյ մասաւոր անցեալը և արգարտութիւնը։

Սկսվեց նոր հոսանք։ Վերջապէս ամենակտրուկ կերպով մէջ ընկաւ զնգապետ Պիկարը, սպայակոյտի նախկին պաշտօնեայ, կրթված, և ազնիւ ասպետ։ Նեատեց ձեռնոցը իր նախկին պետերի առաջ, ամեն վասնզ յանձն առաւ փրկելու ֆրանսիական ազգի և զօրքի պատիւը, փրկելով

անմեղ և դժբախտ Գրէյֆուսին։ Եւ այսօր, հաղարնելով ազնիւ ֆրանսիացիներ, իրանց ձայները մընացնում են՝ Լալիչ և մաքուր գնդապետի ձայնի հետ սգեւորվում նրանով ու ֆրանսիական վազմի մաքրութեան և ազնուութեան տիպար համարում նրան։

Ֆրանսիական ազգի ազնիւ մասի ամենամեծ և ամենաախրելի հերոսը այսօր քաջարի Պիկարն է, որի տարած յաղթութիւնը բարոյական է։ Եւ ինչի մեծ յաղթանակ, առելի բազմաթիւ պատկանի արժանի մը յաղթանակ, քան կուի արիւնոտ դաշտում ստացածները։ Պիկար, ահա ներկայ ֆրանսիոյ արդարութեան ու ազնուութեան անբիծ մարմնացումը։

Պիկար, ահա այն մարդը, որ լուսաւոր և մաքուր ֆրանսիացի զեւ շատ հանրային մտաւոր և բարոյական օգուաներ սպասող մարդկութեան՝ յայտարարում է ֆրանսիան հիւանդ է, բայց կը բժշկվի։

սակաւ ին իւր լուսիւնը մը կրկնելի գործող վրայ։ սակաւ ին բաւ մը չը գրուեցաւ վերջին փոփոխութեանց մալին։ միմիայն երբեմն կը գրուի «այսպիսի իսլամ գաղթական իզմիր հասաւ»։ Ուրիշ է և ինչո՞ւ համար գիտցող չըկա՞յ արդեօք, Իրաւ ալ իսլամի երու գաղթելու մասին ցոյց տուած փութկոտութիւնը շատ աննպատակ բան է, ինչպէս գրեթէ կղզւոյն մէջ հրատարակուող իրքերէն նոր թերթ մը։

Պիկար, ոչ իսլամ տարբը միջոցներուն յիշ կամ շատ բան մը իմանալու անցած դարձածէն, մասնաւորապէս և րոպակալ թերթերէն թէպէտ անսնք ալ հայտնաբեր մէջ են հիմա։ Թաւ բուրբոյին արգելուած է և ֆրանսիական իրքութեան առջեւ ստիկաններ կը սպասեն, որպէս զի գործը ելլողին ձեռքը եթէ Թաւ անսնքնէն գրուեն։ Նոյն հակադրութիւնը ի գործ կը գրուի վաճառման պիտաւոր կեցողներուն շուրջը։ Տեպաւ և Թիկոսո ապաւ ևն այս արգելքէն թուրք ժողովուրդը ծարաւի է սեղեկութեան։ անցեալ շարժում Թիկոսէն Ղայր ք անուն թերթ մը եկած էր, այս թերթը որ ձեռքէ ձեռք յափրջատակուեցաւ, կը գրէ թէ՛ «Իսլամ ժողովուրդը յաւաւ երախտագրաւ պէտք է բլլայ Սուլթանին որ յաջողեցաւ օսմանեան զինուորը և գործ պահել կղզւոյն մէջ՝ հակառակ օտար տէրութեանց պնդումին, ստոյգ է թէպէտ որ միջազգային վարչութիւն մը կայ կղզւոյն մէջ, բայց ի մօտայ, երբ Մայրաքոյն Արեւելքի վէճերը բողոքուին և տէրութիւնը այն սեղ գրաղին, մենք մեր արապիտութիւնը բոլորովին պիտի սարսածնք կղզւոյն վրայ»։

Ասիկայ գաւեշտական յօդուած մը չէ, այլ քաղաքական յօդուած, բայց ա՛յն սաստիկ վարտեսակէ տպրանք մը որ քշուելիք հրատարակ չունի, թէպէտ կլլողներ ալ եղած են։ Նոյն յօդուածը Սերվիք թերթը արաստուած էր, քանի որ Ղայրիք Պոստը մէջ անարգել ծախուեցաւ։ բայց ստիկանութիւնը Սերվիքի տպարանին գոյոր սպասեց և թոյլ չտուաւ որ նոյն օրը այդ թերթը ցրուեն, թէպէտ հետեւի օրը զարձակ ծախուեցաւ։ Մոռցանք ըսելու թէ նոյն յօդուածը կամբաստանէր ոտս կառավարութիւնը, իրրեւ պատճառ բոլոր եղածներուն։ Անաստիկ օրուան խնդրոյն վրայ մեր վերացածները։ Ամէն օր հետա-

քրքրութեամբ կը հարցնեմ տաճկագէտ բարեկամներու թէ ի՞նչ կայ թերթերու մէջ. կը պատասխանեն. «օսմանեան ուղղագրութեան վրայ յօդուած մը» կամ՝ «ներքող մը նոր բացուելիք իսլամ որբանոցին համար»։ այս վերջինը կրքերը մարիու համար խորհուեցաւ և այս առթիւ փառաբանութիւններ եղան կայսերական մեծ սգործութեան համար։

Լուրեր կան թէ նախարարներէ ու մանք արեւելեան նահանգներու բարենորոգում երու մասին կայսեր ծրագիրները մատուցեց են։ Ո՞վ են արգեօք այդ նախարարները։ Մեր ֆայլինիստ մէջ այդ յանդիմութիւնը ունեցող մարդ չեմ տեսնար։ մի՞ հաւատարմութեամբ Մեծ-կարգաւոր և Դասական նախարարը—որոնց երկուքին տարիքը 150ի կը հաստարի—արգէն ձայն հանելու կարողութիւն չունին։ միւսներն ալ վարձկաններ են, որոնք բան մը վոյնթ չեն ընել։ Նախարարական փոփոխութեան լուրերն ալ շատ հիւստոր չեն երեւար, թէպէտ պուտար կարի յուղեալ է Հաստատարի և Մակիթոնիոյ մէջ կղած ցոյցերուն և Ա.Ֆիլիպ մէջ արտասայանուած բողոքներուն համար։ Ստոյգ է թէ Մակիթոնիոյ և Հայաստանի խնդիր մը կը դառնայ խուկ կերպով, բայց պէս վորսպոյրը վերցած չէ։ Ի՞նչ թէ կառավարութիւնը ի՞նչ միջոցներ ձեռք ստած է՞ ու և նոր փոխարտի աւելի չապաւ համար, այդ ալ կը ըսենք յաջորդ նամակով։

ԿԵՏ
Շուրա, 21 Նոյնիւ

Տեղս ունինք բաւական կոկիկ ընթացարան մը, զոր կը սարտինք սակէ պրեթ մէկ ու կէս տարի առաջ տեղացի մէկ քանի երիտասարդներէ կազմուած վարչութեան մը։

Վերջերս տեղուոյ գաւառական ժողովը (Օքրամիլ Սալէթ) նուիրեց ընթերցարանին 100 ֆրի գումար մը։ Այս համեստ բայց պուկարական վարչութեան մը մասնաւորապէս հայկական ընթերցարանին ինքնաբերաբար եղած նպատար մասնաւոր շնորհակալեաց արժանի է և վարչութիւնը մտադիր է այդ գո-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԻ ԳԻՆ

ԳԱՂԱԿԱՆԻ ԿԵԱՔԵ

Ա.

—Աստուած իմ։ Գաղաքին էն հեռու որ մէկ անկիւնը, նեղ փողոցի մը ծայրը, գլուխը՝ գեանայարկ սենեկին պատահանին կրթնուցած, և կիսախուր աչքերը երկնքի խորութեանցը մէջ մխրձած, մեղմ, բայց սրտէ փրթած շունչով մը կը հեւար Աստղիկ. տանն աստն՝ մրմնջելով։

—Աստուած իմ։ Աշունի ցուրտ ու արթառոյր գիշեր մըն էր. կիսատ մաշած լուսնկայ մը. հորիզոնին վրայ առկախ, քանի մը թոյլ, նուր ամպիկներու պատասիկներով շրջանակուած, իր զքգունակ շողերը կը մօղէր, կը ցանցընէր տանիքներուն վրայ, ու այդ

տարտամ նշույններուն տակ, սուները իրենց, աւելները կերկնցնէին, կը փոխին, քմածին այլապան ձեւեր չինելով յառակին վրայ։ Հոս հոն, փողոցներուն ծայրերը անկուած սղաստ լամպարներն ալ, իյինց մարմրող, զոզգազող պլպլու քները կը խոտնէին լուսնկային շառայնիքուն, կարծես աւելի վեր հանելու նամար այդ համող, մեհող, մահական լուսամտութեան ամբողջ տխրութիւնը։

Գիշերը բաւական առաջացած էր. քաղաքը իր ցերեկուան ոգեւորութիւնը կորսնցուցած՝ կը քնանար փակ դուռներուն ու մութ պատահաններուն ետին, ու այս թախծոտ լուսնկայ կրկնմիջուկէր լոկ պահնորդի մը սուլիլին սուր շփոցով հեռաւոր, և մէկ ալ հովին շոր խշրատալով թոռում, սմքած տերեւներու մէջէն։

—Աստուած իմ։ Աստղիկ միայն չէր քնացր այդ գիշեր. և ո՞վ գիտէ, կիսալուսնկայ աս գիշերը, ի՞նչ արիւնտ պատ-

կերներ կը վերապարզէր անոր աչքերուն առջեւ. յիշատակներու ի՞նչ շարքեր, լուսնկայն, աստղերն, ամպիկներն ազդուած կարթնային իր մէջը, որոնցմով իր հանդիստը թունաւորուած՝ քուեր կը փախչէր աչքերէն, և կը մար հոն զամուած պատուհանին։

Ի՞նչ ալ աղուոր կերեւար Աստղիկ, այդ տխուր, մեղանոյ զիշերուան տարտամ լուսաւորութեան մէջ։

Պատուհանը արեւմտաքին կը նայէր, ու լուսնկան իր կիսատ, երեւնէ, իր բոլոր ածգունութիւնը կը թափէր անոր սեւ պիսակներուն, սեւորակ աչքերուն և զարկահար գէլքին վրայ։ Այդ մութ լուսապտակին մէջ, Աստղիկ կը թուեր թախծութեան ոգին, արցունքին արձանը, զիշերուան ստուերներովը կազապարուած, ու լուսնկային շողերովը երփնուած։

Բայց այդ ոգին կուլար իրապէս, ու արձանը կը զգար ու կը սարուար։ Արցունքի մանրիկ բիւրեղներ աչքերուն անկիւնները կը գումար-

ուէին, ու թարթիչներուն թեթեւ խփումովը կլլոցած, հասիկ հասիկ վար կը սահէին իր փղոքիկէ այտերուն վրայ. և ինք բողոքովն աննաատուր իր տխուր մտածումներուն, թող կուտար որ այդ կաթիլները հասնին մինչեւ քրտանը։

Աստղիկի նայուածքը որոշ կէտի մը վրայ սեւեռուն չէր, անի յարտանական թափառումով մը, ամպէ ամպ, աստղէ աստղ, ու լո սնկայն ծովին կերթար, կարծես այդ բոլոր փոստուոր կէտերուն վրայ բան մը կը փնտռէր. ու չի գտնելով իր փնտաւածը կը կրկնէր մէջ ընդ մէջ։

—Աստուած իմ։

Բ. Ի՞նչ ալ աղուոր ևս, Աստղիկ. Ամէն բերան, ամէն աչք, գէլքի ամէն կծկում հիացումի այս արտասայանութիւնը բերած էր Աստղիկ, աստղին հանդիպումի մը մէջ։ Իրաւ Աղուոր էր Աստղիկ, սղուոր եղած էր անի իր մանկութեան օրե-

մարը յատկացնել անմահ Բաֆ-
ֆիի գործերը գնելու :

Անողուս չէր ըլլար եթէ վար-
չութիւնը երբեմն եքեկոյթիներ
և ներկայացումներ սարքէր ի
նպատակ ընթերցարանի՝ անոր
դատարկ գրադարանները լցնե-
լու համար : Նոյնպէս անողուս
չէր ըլլար եթէ երբեմն կազմա-
կերպութիւն լսարաններ կամ գէթ
խօսարաններ, ուր եթէ ո՛չ ու-
սուցիկ ճառեր՝ գոնէ որոշ նիւ-
թերու մասին վիճարանութիւն-
ներ տեղի ունենային : Մտքերու
բաղխումէն լոյս կը ցայտէ :

Ըսինք և դարձեալ ը կրկնենք
թէ ընթերցարանի թանգարանը
գեռ առ այժմ շատ աղքատ վի-
ճակի մը մէջ է : Հինէն մնացած
քանի մը կտոր կրօնական կամ
գիտական մատենաներ միայն կան
հոն : Վարչութիւնը մասնաւոր
հոգածութիւն պէտք է ընծայէ
այն կէտին :

Անցողակի յիշենք այս առթիւ
նաեւ թէ մեր արական վարժա-
րանը անկէ 20-25 տարի առաջ
գրքերու ճոխ հատարածոյ մը ու-
նէր, որ կազմաւորուած էր հին «Ըն-
թերցարան» ընկերութեան
միջոցաւ : Ընթերցարանէն ան-
ցած էր վարժարանին և որոնց
մէջ կային նաեւ բարեխիշտակ
ճանիկ ամբիւրջին : Շուրջ ըրած
մէկ այցելութեան առթիւ նուի-
րած թատկան մեծ քանակու-
թեամբ ընտիր գրքերը :

Սակայն շնորհիւ մեր հոգա-
բարձութիւններու անհոգութեան
և եկող դացող 20-ր մօտ բանասէր
(*) պատուէրին բոլոր գրադպական
մարմալին ամէն մէկն իր բա-
փինը վերցուցած և այժմ պա-
րազ դարանները միայն մնացած
են իրենց մէջի քանի մը շնու-
նուած հատորներով, որոնք կը
կազմեն այժմեան ընթերցարա-
նի բոլոր գրական հարս ութիւ-
նը : Փափաքելի էր որ այլ և այլ
տեղեր հրարարակող թերթե-

րու և գրքերու պատուարժան
խմբագիրներն ու հեղինակներ
հաճէին իրենց գործերէն մէկ
օրինակ նուիրել Շուրջ չայի Հայ-
կական ընթերցարանին : Վասն
զի մենք շատ կը վախճինք
կարգալու բան ունենալ, բայց
դժբախտաբար ամենուէն ալ վճա-
րելու միջոց չունինք :

Մեր «հոգին յովարէ բայց . . .
քուսկը ուկար» :

Պրայիլա . 16 Նոյեմ.

Այս քաղաքին պանդխտութիւ-
նը գլխաւորաբար մշտնջերմէ և
վանեցիկներէ բաղկացած է :
Միշտ ամենէն ծանր և նուազ
վաճառորուած ճառարութիւններ
են ստոնց ըստիւնը : Ուսմանացին
իրիւս երկրին տէր և թուրք
լը Տիւսյոտտոսին և վատիշահին
պատուական թեան շնորհիւ, միշտ
հոն է իր իւրոտ սրտաները խը-
լելու : և դուրսէ անօթի մեան մեր
պանդխտները եթէ ամէն ար-
ժանագոտուութիւն մէկ կողմ
թողած՝ շատ անգամ ևս օրակա-
նով չաշխատին : Բայց ձմրան ե-
ղանա ին մէջ այս ալ կը պակսի,
և պանդխտ աշխատաւորը ըս-
տիպուած է պարագայ այդ օրե-
րուն մէջ, գարնան սպասելով
անգործ մնալու այն քիչ մը դրա-
մը զոր կըրցած էր հաւաքել :
Երկրէն ստացած կսկծակի լուրե-
րը շատ անգամ զինքը կը խելա-
ցնորեն, և ինք անխորհրդաբար
գրեւտուններու մէջ կը փնտռէ
իր միտիւթարութիւնը : Ուրիշներ
կան որոնք խաղամտութեան կամ
անառակութեան անձնատուր կըլ-
լան : Իրենց անմիտութեան կացու-
թեան մէջ ո՛չ մէկ յորդոր ո՛չ
մէկ քաջակերանք չի գար զի-
րենք կազդուրել :

Ամէն անգամ որ ցրտիչը թերթ
բաժնէ, պանդխտները կը մօ-
տենան ընթերցողին և «մասալ» է
ըսելով կը հեռանան : Միայն այն

ժամանակ տղաւորութիւն մը կը
կրեն, երբ ալ մը կարծենք որ
վայրագ խոժանին դէմ ըրած
հետոսական կռիւները իմանան,
ու այն տոնն խոյ կատարու-
թիւն արցունքներ կը թափեն :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Սուրմատի այլ և այլ կողմէրէն
յուճար մեզ հասած տխրագոյնիկ
և մերթ քստմնելի լուրերը կա-
պացուցանեն թէ պարսիկ կա-
ռավարութեան երկրորդական
պաշտօնէութիւնն ալ իր թուրք
կրօն կիցներէն վար չմնար, երբ
կարգը կեղծուեց, կողոպուտի
վրայ ըլլայ :

Միւս կողմէ բացորոշ կը տես-
նուի թէ հոն ալ թոյլատու ոգի
մը կը տիրէ կառավարական բար-
ձր շրջանակներու մէջ, և թէ
կը պակսի հոսկու ձեռք մը որ
սանձէ այդ քիչ շատ բարբարոս
բնազդներով սողորուած ամբոխ-
ները :

Հիմա, այնպիսի կեղծքիշիւ-
րուն գլխաւոր պարամոզութիւն է
«զաջախներու ձեռքախլումը» :
«Ձեր գիւղը զաջախ կայ» ըսելը
իրատեք կուտայ իրենց՝ ամբողջ
գիւղեր թալլել, կարեւոր գու-
մարներ կորցել, ճիշդ ինչպէս
կընէին Հայաստանի հայերը
յարգէ ազատ մնալու համար :
Սյր «զաջախներու վախը այն-
քան խոր արմատ դրած է հայոց
սրտին մէջ, որ տեսանք թէ ինչ-
պէս Մահալի գիւղացիք կառա-
վարութեան մատենցին գլխատ-
ուող ինք տարաբախտ հայերը :
Վերջերս, նոյն պատուակով
Հաֆթլիանն ալ պաշարել ուղեր
են պարսիկները, ան ու սար-
սախի մէջ թողլով բնակիչները :
Բարեբախտաբար ամենէն տագ-
նապալի վայրկեանին, Սուրպա-
տականի անգլիական հիւպատո-
սին միջամտութիւնը տեսակ մը

սլոփանք եղեր է քրիստոնեանե-
րուն : Մոքական աղղկցութիւնով
մը թէ հրանէն հրամաններ ս'սեր
են տեղալ քրիստոնեաներ կատա-
րելու և պատժելու մեղապարտ
պաշտօնեաները :

ՔՐՈՆԻԿ

Պէտիւնէր Լօքալ Անգլիկը լրա-
գիրը կը գրէ : Հայկական և կրէ-
տական շարժման Լոնտրաի պա-
րագլուխները ամէն կերպերով
հասարակութեան կարծիքը կը
գրգռեն Վիլհէլմի դէմ : Այս նը-
պատակով նոյն լսկ առանձին
յանձնաժողով մը կազմուած է,
որուն ձիւրաչափարի եպիսկոպոսը
նամակ մը գրելով, բացատրել է
այն փաստները զորս իր այցելու-
թիւնով հասցուց զիման կայսրը
Թուրքիոյ մէջ ձեռնարկուած
մարդասիրական բոլոր ձեռնարկ-
ներուն : Վիլհամի հղի դուրսը
պատասխանելով այս նամակին՝
ըսած է թէ՛ շատ ցատալի է որ
կայսրը վճռեց Սուլթանի հիւր
գառնալ «Պապոյտ գրքերուն» մէջ
լոյս տեսած արհաւիրքներէն
եւրը :

—Սօֆիաի ոստիկանութիւնը ե-
րևան հանած է, թէ Իշխանին
դէմ գաղտնապէս հրատարակ-
ուած պարուսգիրը Սլէթլինա
(Լոյս) տպարանը տպուած է : Կը
յուսացուի թէ տպարանագետը,
Պ. Պարչէֆ, որ այժմ քանան է,
իր մեղսակիցներուն անունները
պիտի տայ :

—Վառնաի թիւրք հիւպատոս
Րէֆիգ պէյ, անցեալ շաբթու,
առանց բանաւոր պատճառի Գը-
լըճեան անուն հայ մը քանակու-
ծած էր իսլամի մը խանութին
մէջ : Արդ, կիմանանք թէ այս
խնդրին համար, բժշկական տե-
ղիկագրին հետ մէկտեղ բողոքա-
գիրները զրկուած են Վառնաի
նահանգագետին, Սօֆիա թուրք

րուն մէջ, աղուոր կցած էր իր մատ-
ղա ու մանկամարդ օրերուն մէջ :

Իրազ՝ ուր կապրէր ինք հայրե-
նիքին մէջ, մկրտած էր գինքը պար-
զապէս աղաւթիկը մակդիրով և այդ
մակդիրը իր ճկուն հոտակիցն : փող-
փող աղքետուն, կաթ երկուին, նուս-
րեղանին, ու սրապատրէ լանջքին
հետ աճած, լեցուած, չափցած ու
կատարելագործուած էր :

Իր բոլորովը մոլեգին կատարով
պայքար մը մղուած էր երկտասարդ-
ներուն մէջ : Ու վերջապէս գիւղին
էն կարծե՛ք էն աղուորը, պղակազմ
Տիրանը յողթանակը տարած էր, ի-
րեն կին առնելով Աստղիկը :

Երջանիկ կցած էր Աստղիկ իր
հարսնութեան առաջին տարին երուն :
Երկ կնիկ իրարու վրայ կը խենթե-
նային, և նոյն լսկ երկու դասակ-
ներու, Վահէին ու Անուշին յաջոր-
դաբար ծնունդը բուն մը չի պակսե-
ցնիլ զատ, աւելի շատցուցած էր ա-
նոնց գոյլը քանքն ու խանգաղա-
տանքը :

Բայց որքան կարծեղան այդ եր-

ջանիկ վայրկեանները, որքան փու-
թով հալեցան, ցնդեցան երազանքի
այդ բոլորները :

ՅԹԻ սարսափները, իրենց արեւ-
նոտ, կրակէ գիծով եկան պաշարե-
ցին Աստղիկի գիւղն ալ : Աստղին
յարձակուած իրենց սանը վրայ ե-
ղաւ : շատեր աչք ունէին ատ թան-
կագին գոհարին, ու թուրքերու,
քորդերու վայրենի հրստակներ ա-
նոնց դուռը ափ առած, գիրար կը
հրմակէին, գիրար կը կոխկոտէին :

Տիրան հրացան մը ձեռքը, սան-
գուխին գուռը պատրաստ կեցած էր,
Աստղիկ անոր ետեւը կուզ եկած իր
զուակները կը սեղմէր կուրծքին
վրայ սարսափէն սանձակած :

—Փախի՛ր, Աստղիկ, փախի՛ր, պո-
տաց Տիրան : մեռնելու հոգ չէ, կը
գողամ երբ կը մտածեմ թէ կրնաս
սա անհուտա շուներուն ձեռքը իյ-
նալ :

Աստղիկ ինչպէս կրնար իր սրտի
հատր փեսան ձգել հեռանալ, ո՛չ,
որչա՛մ էր մէկտեղ փախչիլ կամ մէկ-
տեղ մեռնիլ :

Դուրսէն աղուորը հեղձեակէ կը
չափար, կացինի՛ տապարի հար-
ուածներու սակ զուռը կերբար :

—Ե՛լ գնա՛, խենդ կնիկ, գոչեց
Տիրան, և կատարի յարձակումով մը
կնիկը բունց եւ տարաւ, տանը ե-
տեւի կողմէն փոքրիկ գոնէ մը դուրս
հրեց ու աւելցուց փախի՛ր, փախի՛ր,
չխակ լեռ : ևս հոս կը մնամ, որպէս
զի ժամանակ ունենաս փոխելու :

Վերջին գրկատանտու մի մը մէջ,
վերջին միտս լարովը բոին : Աստղիկ
պարտէլին մոթին մէջ կոյտուեցաւ,
զատակները գրկած, իսկ Տիրան խո-
չոր տակառ մը գորցնելով փակեց
դրան տեսքը, և եկաւ նորէն կե-
ցաւ սանդուխին գոյլը :

Ճիշդ ալ ժամանակն էր, սանը մեծ
դուռը ջարդ ու փչուր ինկաւ : և ամ-
բոխը գիտական վատնատու մը
մոթ բարի լեցուեցաւ : Հրացանի
գոյց մը բարձրներն նախալուծակ-
ներէն պոյզ մը գեղին փոխցին :

—Կրա՛կ, կրա՛կ, սոնայ ամբոխը,
ու դուրսէն բոցավառ ջա՛ն մը բեր-
ուեցաւ :

Տիրան պաղարեւութեամբ կեցած
էր սանդուխին ծայրը, և շարունակ
կը լեցնէր ու կը պարպեր իր հրա-
ցանը, տասը քսան ձեռք մէկէն
բարձրացուն և տասը քսան զննքերէ
արձակուած որոտու մը սուներ զորդե-
ցուց և ամէն բան վերջացաւ :

Տիրան անշուշ վար ինկաւ : և
ամբոխին առաջին կարգը անոր
գիակը կոխկոտելով վեր բարձրա-
ցաւ : Ամէն անկիւն նայեցան, ծակ
ու ծուկ խուզարկեցին, բայց Ասա-
ղիկ չկար վերջապէս դտան դադունի
դուռը : քացին զայն, դուրսը խո-
ւար էր, չէնչ կը տեսնուէր : Թե-
րեւս փախած էր ան, բայց ո՛ր,
կողմ, կարիք է ճարպիկ մէկը գող-
ցած պահած էր : Աստղիկ, կողոպուտի
այդ առատութեան մէջ յիմարու-
թիւն սեպեցին անոր հետապնդի,
ուստի բաւականացան իրենց վրէժ-
խնդրութեան կիրքը գոհացնել սուներ
կրակի տալով, և խուժեցին միւս
սուներուն վրայ :

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԱՆ
(Շարունակելի)

ընդհ. քամիսէրին և Պոլսոյ Խա-
րիճիէին: Կրտսի թէ տեղւոյս
թուրք վաճառականներէն մէկ
քանիւնք արդէն դժգոհ Ռէֆիգ
պէյի պաշտօնավարութենէն, ի-
րենք ալ բողոքած և անոր պաշ-
տանկութիւնը խնդրած են:

—Որքանոցներու մատակարար-
ութեան մասին Պատրիարքա-
րանի ասկէց առջ ըրած հար-
ցումներուն, նպատակաւ պա-
տասխաններ հասած են հայաս-
տանէն: Այս տեղեկութեանց նա-
յելով, սնունդի, հագուստի,
նստման և առողջական տեսակէտ-
ներով սրբանոցները լաւ վիճակ
մը ունին:

—Կետենն ոսկի հանելու մըտ-
քով Քլոնտայք գացող հայ պան-
դուխտները ձեռնունայն ևս՝ Ա-
մերիկայ կը դառնան, վառք
առլով որ կեանքերնին վրայ չեն
առած ոսկի երկրին մէջ:

—Երեւանի թեմական վարժա-
րանին վերանսույ Պ. Սիմէոն
Շահնազարեան իր ոտճիկը (տա-
րեկան 1500 ռուպլի) նոյնիւր է՝
մէկ մասը աղքատ աշակերտնե-
րուն, միւս մասը էջմիածնի:
Վարժապետական դասուն մէջ և-
զական դէպք՝ զոր կարծէ ար-
ձանագրել:

—Տիկին Քանանեան, Լնդար-
եան ճեմարանի հանգուցեալ վե-
րատեսչին այրին, 4,000 ռուպլի
նոյնիւր է, որուն առկոսով ուսու-
նող մը պիտի պահուի Մոսկուաի
համալսարանին մէջ:

—Կ. Պոլսէ «Թայմզ»-ի կը հե-
ռնդրեն թէ Վանայ մէջ նոր ջար-
դերու շրոյցներ կը շրջին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

ԿՐԷՏԷՆ ԼՈՒՐԵՐ

Տէրոյ թիւնները հետեւեալ կըտ-
րուկ ծանուցագրով է որ Երկիրս
իշխանի ընտրութիւնը հաղորդե-
ցին Դրան. «Չորս պետութիւն-
ները, Ռուսիա, Անգլիա, Փրանս-
սա և Իտալիա, խորհեցան թէ
պարագաները ցոյց կուտային ի-
րենց Կրէտէի մէջ բարձրագոյն
Քոմիսէր մը նշանակելու պէտքը:
Հետեւաբար այս պաշտօնին կու-
չեցին Ըննաստանի երկիրս իշ-
խանը, իբր յարմարագոյն անձը
այս պաշտօնը կատարելու: Տէ-
րութիւնները պատիւ ունին այս
անուանումը Բ. Դրան ծանուցա-
նելու»:

Երկիրս իշխանը Սուտա պիտի
հասնի յունական շոգեմարտով մը
որ ընկերացած պիտի ըլլայ չորս
պետութեանց չորս հատ թնդա-
նութակիր շոգեմարտներէն: Հաս-
նելուն պէս, ծովակալները յու-
նական զրօշը պիտի պարզեն և
թնդանութի քսանեմէկ հարուած-
ներով պիտի բորեւեն: Յամաք
ելլելով, իշխանը կառքով Քանէ
պիտի երթայ ծովակալներու ըն-
կերակցութեամբ, որոնք, այդ
քաղաքին մէջ, կղզւոյն կառա-

վարութեանը իշխանին պիտի
յանձնեն:

—Յունաստանի և Կրէտէի ա-
ռեւարական յարաբերութիւննե-
րը կարգի մտնելու վրայ են: Մո-
տերս շոգեմարտին կանոնաւոր
երթեւեկ մը պիտի հաստատուի
Բիրէաի և կղզւոյն միջեւ:

—Միջպզգային դատարանը
դարձեալ 12ի չափ իւրամներ մահ-
ուան և տաժանակիր աշխատու-
թեան դատապարտեց: Ասոնք
վերջին դատապարտութիւններն
են: Մովակալներու որոշումով
Քանտարի ջարդերուն համար իս-
լամ յանցաւորները հետապնդե-
լու գործը դադրած է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիոյ գաղթային նախարար
Պ. Չէմպրէն լրագրաց մէջ յօդ-
ուած մը հրատարակելով, կը
ջատագովէ դաշնակցութիւն մը
անգլիախօս բոլոր ազգերուն
միջեւ՝ ընդդէմ բոլոր աշխարհի:

—Փիլիպպեան կղզիներէն հաւ-
սած լուրերուն նայելով, տեղա-
ցի ապստամբները մերժել են ա-
մերիկեան տիրապետութիւնը, և
մտադրութիւն յայտնել են ողի
ի բռնի կռուելու անոր դէմ: Այս
նպատակով իրենց զինքն զը-
րեր են սպանիացի տաս հազարի
չափ զինուորներ, ստիպելու հա-
մար զանոնք կռուիլ ամերիկացի-
ներու դէմ:

—Արեւելեան Բուժչիի նախ-
կին փոխ. կառավարիչ Կավրիլ
փաշա, մեծաւ անցեալ երկու-
շաբթի, Պոլսոյ մէջ, Հանգուց-
եալին պաշտօնավարութեան օ-
րովն էր որ 1885ին, Արեւելեան
Բուժչիի Պուլկարիոյ հետ վերջ-
նական միացումը իրականացաւ:

—Սերպիական կառավարու-
թիւնը որոշել է մեծ պետու-
թեանց յիշատագի մը մատու-
ցանել, Քոսովայի նահանգին
քրիստոնեաներուն վրայ՝ իսլամ
ալպանիացիներուն ձեռքով գոր-
ծուած բռնութեանց առթիւ:
Ա՛լ իր բանակցութիւնները չը
պիտի շարունակէ Դրան հետ, քա-
նի որ այս վերջինը, անհատում
ճանուցագրերու փոխանակումէն
եւքը, մերժած է այս բռնու-
թեանց գոյութիւնը ճանչել:

—Մանուցած էինք արդէն թէ
մօտերս Նիկիոյ մեծ գուքը
Սան Սթեֆանօ պիտի երթայ,
Ռուս յիշատակարանին բացման
նախագահելու: Այժմ կիմացուի
թէ ուստական զեպանին պա-
հանջումներուն վրայ, Սուլթանը
այս նոր այցելուին ալ պիտի
ընէ ճիշդ ու ճիշդ այն մեծա-
չուք ու հետեւաբար մեծածախ
ընդունելութիւնը գոր ըրաւ Գեր-
մանիոյ կայսեր: Ռուսական փոք-
րիկ վրիժառութիւն մըն է այս, որ
նոր միլիոն մը ոսկի պիտի արժէ
թրքական վտիտ զանձին:

—Պուլկարիոյ վանական գոր-
ծարանատէրերը յենլով սեղա-

կան ձեռարուեստին քաջալեր-
ման, օրէնքին, Առեւարական և
Երկրս գործական նախարարին
խնդրագիր մը տուած են, պա-
հանջելով որ գուրտէն եկած և
իրենց ձեռարուեստին հարկաւոր
նախնական նիւթերուն տուրքը
չնշուի: Նախաշարք նպատա-
ւոր պատասխան մը տուեր է:

—Անցեալ ուրբաթ օր Վիէն-
նաի մէջ անչուք հանդէսներով
կատարուած է Փրանց Փոզէֆ կայ-
սեր զահակալութեան յիսնամայ
յոփէլանը:

—Պոլսոյ իտալական զեպանը
անցեալ հինգշաբթի օր ծանու-
ցագիր մը ներկայացնելով Դրան,
16,000 ոսկի փաստուց հատուցում
պահանջած է, հայկական ջար-
դերու ատեն փաստուց լտալա-
կան հայա, ակներուն համար:

—Չինու մէջ ֆրանսացի միսի-
սնար մը և տասներեք նորա-
գարձներ ջարդուեր են մոլե-
ռանդ մանտարիներու ձեռքով:

—Չորս կատաղի ա՛ի իշխանա-
կաններ սպաննագին յոյտարա-
րութիւն մը հրատարակել են
հազանիշխանական համաժողովին
դէմ:

ԼԻՐԵԼ-ՏԵՊՈՒՏ

Գերմանիոյ կայսրութիւնը կազ-
մող մասերէն մէջն է Լիրբէտէթ-
մուլի մանրագիտական պետու-
թիւնը, որ սակայն իր փոքրու-
թեան հաւանակ անկախ է իրեն-
քին գործերուն մէջ գերման
սահմանագրութեան սփիւն հա-
ձայն:

Արդ, այս պահուս Լիրբէ-Տէգ-
մուլի մեծ գուքին և Վիլհէլմ
կայսեր միջեւ բաւական ժանր
վէճ մը կայ, գիտնալու համար թէ
մեծ գրական գերագոտանին որ
ճիւղին պիտի վիճակի գահը:
Բրուսիա կուզէ որ խնդիրը լուծ-
ուի Դաշնակցային խորհրդին
մէջ: Իսկ մեծ գուքը լը գոչէ
թէ Բրուսիա իրաւունք չունի իր
ներքին խնդիրներուն խառնուե-
լու: Ասկէց զատ, Վիլհէլմ կայսրը
յունի մանական հեռագիր մը
զրկած ըլլալով մեծ գուքին,
այս վերջինը կայսեր դէմ բողոք
բարձած է Դաշնակցային խոր-
հուրդին առջև: Խնդիրը ծանր
է. մէկ կողմը Վիլհէլմի համար
նուստութիւն, և միւս կողմը՝
զեպտու մը այ. օրէնքին՝ որուն
վրայ հիմնուած է կայսրութեան
ամբողջ շէնքը: Փրանսական լրա-
գիրները ցնծութեան մէջ են
զերմանական ներքին այս ծանր
վէճին պատճառով:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Խեղօ, Պրայիլա. — Կրկեցեք:
—Մ. Փ. Հնամուտա-խանութեան
ի Մարտէլլ. — «Բի ուր որ անսպա-
ս'ասանպը»...
—Պոլսի Սալթաթմարուք թաղին
Արմենակ Ռուբէն Շամբան 23 տարե-
կան երիտասարդը, վերջին զեպէն
յետոյ անյայտ եղած է. տեղեկու-
թիւն ունեցողներէն կը խնդրուի
զրել «Շալթու մի» խմբագրութեան:

—(—)

ՁԵԿՈՅԺ

Տիկնանց Բերթցարուս Վառնի
Ամէն ոք ազատ է Գ. և Կիր. օ-
րերը, ժամը 1-5 զրքեր ստանալ:
8 օրէն անվթար վիճակի մէջ ետ
բերելու պայմանով: Այս պայմանա-
ժամը անցնողները նախ 5, և յետոյ
10 սանթիմ սուպանք կը վճարեն ու-
չացման ամէն մէկ օրուան համար:
Եւ. օրերը. նոյն ժամերուն ախ-
կիները եւ. օրերը երբ արատուած
են նոյն իւր ընթացարանի մէջ
կարգալ, և զազալարի փոխանա-
կութիւններ ընել:

Թերթերը դուրս չեն արուիր:
Ընթերցարանը բաժանորդագրու-
թիւն և նոյն իրատուութիւններ կըն-
դունի մատենագարանին ճոխացման
փափաքող անձերէն:

ՊՕՐՍԱ

Վառնա 24 նոյնիւրն

ՊՈՒՂՏԱՅ
Վազօն, լիպրա 55-58, 4 էքթօլ:
9120-10 ֆրանք
Արապա, լիպրա 55-60 4 էքթօլ:
9-12 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 42-50 4 էքթօլ. 5.80-6.20
ֆրանք

ՄԻՍԻՐ
Վազօն, 55-57 լիպրա, 5.70-5.80
Արապա, 55-60 լիպրա, 6-6.10
Կիւնկէ 15-20 վազօն, 25-30 սոսպա
կէլմէքաէ տիր:

ԵՈՒՂԱՅ
Կիւնկէ 4-5 արապա կէլմէքաէ տիր:
4.60-5 ֆրանք

ՆԱՐԻ
Կիւնկէ 5-6 արապա կէլմէքաէ տիր:
5.8-60 լիպրա, 5.20-5.80 ֆրանք

ՖԱՍՈՒԼԵՍ
Կիւնկէ 8-10 սոսպա կէլմէքաէ տիր
100 օգգար 18-22 ֆր. մալա կէտէ:
Արապա մուամէլէսի նարօլոն 21
ֆրանք հիսապը իլէ տիր:
Կիւնկէ 8-10 վազօն, 50-60
արապա պուզապ, 10-15 արապա
արքա կէլմէքաէ տիր:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏՊԱՐԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ
Վ.Ա.Ո.Ա.

Երկրորդ բազ, Երբէկեւս փողոց.
Սազալը 24-25 կից.

Կը սպագորուին հոյերէն, պուզապե-
րէն, քաղղերէն, յունարէն, տուրքեր,
և այլ լեզուներով այցեւորման, հարց-
տան, հարսանեկան հրաբրտգիր, աղ-
գարարութիւն, նամակագրութիւն, պահ-
րան, մահաղագ, վաճառականական ամէն
տեսակ գործեր, գէրք, լրագիր, և այլն:

Գուճաւուր եւ ոսկեգոծ զարդագործ-
ու համար ամէն լեզուէ նոյն ստեղ եւ
մասուաւոր գործիներ կը գտնուին:

ՄԵՍ ԻՆԱՍԻ ԵՒ ՄԱՐՈՒՆԻՆԻ
ԳԻՆԵՐԸ 808Ժ ԴԻՒՐԱՄԱՏԱԵԼԻ

Ուրիշ քաղաքներէ եկած ամէն յան-
նարարութիւններ ճշգրտութեամբ և փու-
թով կը կատարուին:

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնաի մէջ կը վաճառուի Մու-
սալլա, թահմիլ Կեղղիպէտօյլեքանի
խանութիւն, և Ապաի բրահման մզկի-
թին դէմը հայկական գրատունը:
Ա. Չարպանէլեանի քով:

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.
Печатница „Взаимность“ Варна